

ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱՇԻՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

800

ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՕՂԱՐԵԱՆ՝
ՀԱԽԱՏԱՐՄԱԳՈՅՆ ՍՊԱՍԱԽՈՐ ՀԱՅՑ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Անոնք որոնք անձամբ ճանչցած էին Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ամենէն երկարակեաց և ամենէն նուիրեալ միաբաններէն Նորայր Արքեպիսկոպոս Պօղարեանը, և կամ անոնք որոնք իր գիրին մէջէն երևակայած էին զինք, չեն կրնար միաբերան չհաստատել բազում արժանիքներու շարքին այն մէկը, որով հանգուցեալ Սրբազանը կը ներկայանար որպէս Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ հարազատ աւանդութեան ամենէն հաւատարիմ, նուիրեալ և յարգալից դէմքերէն, և՛ հազուագիտ անձերէն մէկը:

– Եկեղեցւոյ պաշտամունքը, հասարակաց աղօթքը իր ամենօրեայ կեանքին մաս կը կազմէր:

– Երուսաղեմի Պատրիարքական Աթոռին պատիւն ու վարկը իր նախանձախնդրութեան գոյութեան և խորք ունեցող հիմնատարներէն մէկն էր:

– Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հանդէպ սիրոյ, հոգեկան կապուածութեան զգացումը միշտ վառ կենդանութեամբ կը ճառագայթէր իր անձէն:

– Գլխակալն, հետազօտողի, ձեռագրագէտի արժանիքները շփեղ պայծառութեամբ կը շողան իր ձեռագրակազմական տասնէմէկ և մեծադիր հատորներովը, որոնց մէջ կ'արտացոլան առարկայական ճշգրտութեամբ և ամբողջականութեամբ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի ձեռագրատան նոյն գանձերը:

– Բարի, ազնիւ մարդու կերպարը իր ինքնադիմագծութեան ամենէն բացայայտ և քնորոշ յատկանիշները կը դրսևորէր:

Կարելի է դեռ երկարել շարքը Նորայր Սրբազանի անձը բարացուցող գիծերուն և գոյներուն:

Բայց Մեզի համար ամենէն գրաւիչ կողմերէն մէկը իր անձնաւորութեան՝ այն խոր ապրումն էր որ ան իր մէջ պահեց կենդանի անշեղ և անայլալ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ վարդապետական, ծիսական, կանոնական, մշակութային ժառանգութեան առանձնայատկութեան նկատմամբ:

Շատեր խօսեցան ու գրեցին առաւելաբար անոր գրական-գիտական, բանասիրական-ուսումնասիրական արժանիքներուն մասին: Ուրիշներ դեռ պիտի գրեն հայագէտի իր պատկառելի վաստակի մասին: Բայց Մենք կ'ուզենք որ շուրջ տակ չմնայ Հայց. Եկեղեցւոյ Հաւատարմագոյն սպասաւորի իր բացառիկ արժանիքը:

Եղիշէ Պատրիարք Դուրեանէն, Թորգոմ Պատրիարք Գուշակեանէն, Բարգէն

Կաթողիկոս Կիլիկիայի եպիսկոպոս Սուրբ Գրիգորիոսը իր ժառանգած կրօնաբանական և հայաշունչ ոգին և Մաղափա Օրմանեանի գիտական վաստակն իր ֆաղած ուղղութիւնը մնացին իր մէջ այնպէս առողջ և առոյգ որ ո՛չ ժամանակը և ո՛չ ալ արդիապաշտ մտայնութեան և կենցաղակերպի փոփոխութիւնները կրցան տոգոնել թարմութիւնն այդ ժառանգութեան և ո՛չ ալ նուագեցնել ուժգնութիւնը իր սիրոյն և յարգանքին Հայց. եկեղեցւոյ դարաւոր աւանդութեան հանդէպ:

Կապրիմ ժամանակներու մէջ ուր Աւանդութիւնը ստուերի տակ իյնալու վտանգին է ենթակայ: Բնականօրէն կեանքը փոփոխութեանց յարաշարժ գնացք մըն է: Բայց այդ փոփոխութեանց ընթացքը կը վերաբերի կեանքի արտայայտութեան ընթացիկ երևոյթներուն: Մառնիկի երկրորդ կը կոտորուի, նորերը կ'ընծիւղին: Տերևները կը դեղնին ու կ'իյնան, նորէն կը կանաչնան: Բայց եթէ արմատները կոտորուին կամ տկարանան՝ ծառը չի կրնար կեանք ունենալ: Ինչպէս հայ ժողովրդական առածը կ'ըսէ. «*Մառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն*»: Մենք ալ կ'աւելցնենք «*Ազգը Աւանդութեամբ է ազգ*»:


Եկեղեցին Հայոց՝ Քրիստոսի ֆարոգութեան հարազատ ծաղկումն է հայութեան կեանքին մէջ: Դարերու խորութիւն ունի կաղնիի նման այդ եկեղեցին: Կաղնիին ճիւղերը այնքան յաճախութեամբ և այնքան վայրագութեամբ ջարդուեցան դարերու ընթացքին: Բայց կաղնին մնաց կանգուն և մշտադալար որովհետեւ արմատները մնացին անաղարտ: Որքան հարուած ստացաւ կաղնին՝ այնքան խորացան անոր արմատները:

Նորայր Սրբազան Հայց. եկեղեցւոյ պատմութեան ամենէն հմուտ և այդ պատմութեան ոգիին հաղորդ դէմքերէն մէկը եղաւ Ի. դարու գրեթէ ամբողջ տևողութեան: Ան որ ունի պատմութեան ըմբռնումը՝ չի կրնար չունենալ Աւանդութեան յարգանքը: Հայոց ձեռագիր ու տպագիր մատենաները, գրողներն ու գրիչները, ոսկողներն ու ծաղկողները իր կեանքին հետ միախառնուեցան: Երուսաղէմի Հայոց Սրբոց Յակոբեանց մայրավանքը իրեն համար եղաւ Հայց. եկեղեցւոյ աւանդութեան վառ օճախը, ուր ապրեցան արմատները մեր գոյութեան և ապրեցուցին նոր ծիլերը մեր լինելութեան:

Մինչ մէկ կողմէ յարգանք և երախտի կ'ընծայենք իր յիշատակին իր պաշտելի Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն, միւս կողմէ կոչ կ'ուղղենք մեր այսօրուան և գալիք ժամանակներու հոգևորականութեան, որ Նորայր Պօղոսեան Սրբազանէն ֆաղէ դասը Հայց. եկեղեցւոյ աւանդութեան պինդ ու առոյգ պահպանութեան, վերակենսաւորման և վերաթմերման:

Մեր այս սրտալից տուրքն իր յիշատակին կը փակենք իր այնքան սիրած հայ մատենագիրներէն, աստուածաբաններէն Ներսէս Լամբրոնացիի բառերովը, որոցմով կը հաւատանք գերբրջանիկ պիտի զգայ ինքզինք իր երկնային երանաւէտ կայիին մէջ.

«*Ամենայն ազգ զիւր հարց աւանդութիւն պինդ կալցի*»:



ԳԱՐԵԳԻՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

28 Յուլիս 1997

Ի Ս. Էջմիածին